«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի պետական քոլեջ

«Գրադարանային գործ» բաժին

Դիպլոմային աշխատանք

Թեմա՝ «Դպրոցական գրադարանը համայնքին ծառայող ռեսուրս – կենտրոն»

Ուսանող՝ Մարգարիտ Մինասյան
Ղեկավար՝ Լուսինե Ալեքսանյան

Բովանդակություն

Դիպլոմային աշխատանքս բաղկացած է ներածությունից, որտեղ հիմնավորված է թեմայի արդիականությունը՝ «Դպրոցական գրադարանը համայնքին ծառայող ռեսուրս կենտրոն», և երկու գլուխներից:

Առաջին գլուխը վերնագրված է «Դպրոցական գրադարաններ», որի ենթաբաժիններն են՝

1.1 Դալարի միջնակարգ դպրոցի գրադարանի պատմությունից

1.2 Գրադարանային ֆոնդը, պայմանները, միջոցները:

Երկրոդ գլուխը վերնագրված է «Գրադարանաստեղծ համայնք», որի ենթաբաժիններն են՝

2.1. Դպրոցի գրադարանը՝ որպես համայնքին ծառայող կառույց

2.2. Ո՞վքեր են օգտվում համայնքի գրադարանից:

Աշխատանքն ունի նաև հավելվածներ, եզրակացություն և օգտագործված գրականության էլեկտրոնային և տպագիր աղբյուրների ցանկ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրադարաններն ընդհանրապես, լայն իմաստով, կենսամշակութային, ուսումնական, տեղեկատվական վայրեր են, որոնք նպաստում են տեղեկատվության, գիտելիքների ձեռք բերմանը՝ գրքային և տեխնոլոգիական միջոցներով: Գրադարանը մի համակարգ է, որը կարևոր դեր և նշանակություն ունի կրթության և հասարակական կյանքի բազմակողմանի զարգացման գործում:

Դպրոցական գրադարանները նույն ֆունկցիան են կատարում, ավելացրած նաև հեղինակային ծրագրերի և բազմազան ուսումնական-հետազոտական նախագծերի իրականացումը՝ դասավանդողների և սովորողների կողմից: Դպրոցում գրադարանը հանդիսանում է բազմատարողունակ հիմնարար աղբյուր՝ հատկապես սովորողների համար:

Հիմնավորելով դիպլոմային աշխատանքիս արդիականությունն ու հրատապությունը, լինելով Դալար գյուղի միջնակարգ դպրոցի գրադարանավար՝ շատ կարևոր եմ համարում, որ դպրոցի գրադարանը իր նյութատեխնիկական միջոցներով և գործառույթներով կարողանա ծառայել համայնքի բնակչությանը թե՛ գրական ու գիտական ռեսուրսների, թե՛ պատճենահանման ու թվայնացման աշխատանքների իրականացման տեսանկյունից մինչև համայնքային ու դպրոցական միջոցառումների, հանդիպումների ու այլ նախագծերի իրականացնող: Քանի որ գյուղական համայնքներում այսպիսի խնդիրներ շատ են առաջանում, և մարդիկ մի նյութի, ուսումնական, գեղարվեստական ռեուրսի կամ պատճենահանման համար հարկադրված են լինում այցելել մարզկենտրոն: Նման իրավիճակներում դպրոցական գրադարանները՝ որպես համայնքին ծառայող ռեսուրս-կենտրոններ, խնդրի լուծման լավագույն օրինակը կարող են դառնալ:

1.1. ԴԱԼԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Դալարի միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1965 թվականին և նույն ժամանակ էլ հիմնադրվել է դպրոցի գրադարանը: Մեր դպրոցի գրադարանի տարածքը չափազանց սահմանափակ է: Նստատեղերը գրադարանի տարածքում քիչ են, գրքերի պահարանները դասավորված են հարմարավետ ու համահունչ, գրադարանը լուսավոր է, ունի ոչ մեծ ընթերցասրահ, պատուհանից երևում է շատ գեղեցիկ տեսարան՝ գյուղի Մայր Աստվածածին եկեղեցին: Դպրոցի գրադարանը զբաղեցնում է 26 քմ տարածք: Այն գտնվում է դպրոցի կենտրոնում՝ երեխաներին հասանելի վայրում: Գրադարանն աշխատանքային այն վայրն է, որտեղ աշակերտներն ու ուսուցիչները կարող են կարդալ, աշխատել, անցկացնել դասերից դուրս ազատ ժամանակը, ծանոթանալ պարբերականներին կամ պարզապես հաղորդակցվել միմյանց հետ: Գրադարանի ֆոնդը կազմում է 3952 կտոր գեղարվեստական և 2430 կտոր մեթոդական գրականություն:

Դպրոցի գրադարանավար

Դպրոցի գործող գրադարանավարի աշխատանքի հիմքում ընկած է տարեկան ծրագրերը, որը ներառո
է հիշարժան տարեթվեր, մշակույթի և գրականության նշանավոր դեմքերի հոբելյաններ, գրքերի քննարկումներ, բեմականացումներ:

Յուրաքանչյուր գրադարանավար գիտի, որ երբ սովորողները լավ են կարդում, նրանք ավելի անկաշկանդ են զգում իրենց ուսումնական գործընթացում: Գրադարանավարի առաքելության հիմնական մասը ընթերցանության քաջալերումն է:

Գրադարանում գործում է գրքերի վերականգման բաժինը: Դպրոցի գրադարանի ռեսուրսների փոխարինումը իրականացվում է կորստի, վնասվածության, նաև հնացած, ոչ արդիական կամ անհամապատասխան լինելու պատճառով: Գադարանավարը պետք է դառնա պահպանման ու վերանորոգման մասնագետ

Գրադարանում մաքրության և հարմարավետության ապահովումը: Շատ կարևոր է պահպանել գրադարանը մաքուր և ոչ փոշոտ:

Գրադարանները ստեղծում են սեփական փոշին, հատկապես երբ շատ հաճախողներ կան: Պետք է մշակել պահարանների մաքրման հերթականության և հաճախականության հատուկ ռեժիմ:

Սովորողների հետաքրքրությունների բավարարում: Դպրոցի գրադարանավարի համար կարևոր խնդ
է, որ յուրաքանչյուրի հետաքրքրությունները պատշաճ չափով բավարարվեն գրադարանում:

Գրադարանի սեփական ռեսուրսների ստեղծումը: Արդի ժամանակաշրջանում հնարավոր չէ պատկերացնել գրադարանն առանց թվային միջոցների և թվայնացման աշխատանքների: Սակայն թվայնացման աշխատանքներ իրականացնելիս պետք է առաջնորդվել «Հեղինակային և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով:

1.2. ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՄԻՋՈՑՆԵՐԸ

Գրադարանային ֆոնդը-գրադարանային համակարգի << սիրտն>> է: Այն փաստաթղթերի կանոնակարգված հավաքածու է

• Գրադարանային ֆոնդը պետք է համապատասխանի կրթակարգին, մատչելի լինի սովորողներին և գրավիչ:

• Սովորողները պետք է կարողանան գրադարանում գտնել բազմազան ռեսուրսներ տարբեր լեզուներով, որպեսզի զարգացնեն ընթերցանության հմտությունները և օգտագործեն դասերի ժամանակ:

• Գրադարանավարը պետք է գրադարանի կառավարման համակարգի միջոցով կապի ռեսուրսները կրթակարգին և ուսումնական ծրագրերին:

Գրադարանի ռեսուրսները ընդգրկում են բազմազան տեղեկատվական միջոցներ

- Ռեսուրսների համալրում
- Գրադարանի լիարժեք շահագործման դեպքում ռեսուրսների 10%-ը պետք է ամեն տարի փոխարինվի, թարմացվի: Սա նաև Եվրամիության կողմից առաջարկվող չափանիշներից մեկն է:
- Գրադարանային ֆոնդի գնահատում
- Պետք է գնահատել գրադարանի յուրաքանչյուր ռեսուրս առնվազն տարեկան մեկ անգամ: Գնահատումը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.
- Դասագրքեր և գրադարանի պաշար
- Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամը (ԴՇՀ)՝ որպես հասարակական կազմակերպություն, հիմնադրվել է 1997 թվականի օգոստոսին 29-ին: 2001 թվականին այն վերակազմավորել է:

ԳԼՈՒԽ 2. ԳՐԱԴԱՐԱՆԱՍՏԵՂԾ ՀԱՄԱՅՆՔ
2.1 ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆԸՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻՆԾԱՌԱՅՈՂ ԿԱՌՈՒՑՑ

- Համայնքին ծառայող դպրոցի գրադարանը պետք է ունենա համապատասխան առանձին մուտք հատուկ կարիքավորների և համայնքի այցելուների համար, որպեսզի ազատ օգտվեն գրադարանից: Պետք է ունենա համապատասխան ցուցանակներ՝ ցույց տալու համար գրադարանի տեղը, դրան հասնելու ուղղությունը: Ցուցանակները պետք է լինեն արտահայտիչ, որտեղ հնարավոր է, պետք է տեղադրել սլաքներ՝ նկատի ունենալով, որ գրադարանը դառնալու է ավելի պահանջված ու մեծ, քանի որ ծառայելու է նաև համայնքին: Գրադարանը այն կարևոր վայրն է, որից դպրոցում պետք է մշտապես օգտվի յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ համայնքի այցելուները:
- Համայնքին ծառայող դպրոցի գրադարանը, պետք է այնպես նախագծվի, որ առավելագույնս ազատ տարածքներ ունենա: Ունենա հարմարավետ նստատեղերով աթոռներ՝ սովորողների ընթերցանության համար և սեղաններ՝ համակարգիչների համար, ընդ որում ցանկալի է, որ դրանք հարմարեցված լինեն գրականության, ամսագրերի ու մամուլի հետ աշխատելու համար:

Համայնքային գրադարանների մասին: Համայնքային գրադարանները հիմնադրված են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:Համայնքային գրադարանը ապահովում է համայնքի բնակչության գրադարանային-տեղեկատվական մատչելիությունը, համալրում է գրադարանային հավաքածուն հանրապետական, մարզային, տեղական տեղեկույթ կրող համապատասխան նյութական կրիչով, ինչպես նաև էլեկտրոնային շտեմարանի միջոցով իրականացնում է դրանց պահպանումը: *Դալար համայնքի գրադարանն* ունի 8050 կտոր գիրք, որից 6030-ը՝ գեղարվեսական, 2020 կտոր՝ մեթոդական: Հայերեն գրականությունն էլ շատ հին է և թարմացնելու կարիք կա: Գրադարանն աշխատում է նորմալ աշխատանքային ռեժիմով, գրադարանից տարեկան օգտվում է 280 ընթերցող, որից 212-ը դպրոցահասակներ են: Այն զբաղեցնում է 18 քմ և չունի ընթերցասրահ:

Համայնքի գրադարանավարները կարող են առաջարկել հետևյալ օգնությունը՝

- աջակցել գրքի փառատոնի կազմակերպմանը
- օգնել գրքերի խմբավորման գործում
- տրամադրել լրացուցիչ գրքեր
- տրամադրել լրացուցիչ ռեսուրսներ նախագծերի համար
- տրամադրել ցուցադրվող ռեսուրսներ
- ցուցադրել դպրոցի նախագծերը համայնքում
- աջակցել աշակերտ-գրադարանավարներին
- կազմակերպել գրական միջոցառումներ
- այդ գրադարանները կարող են գործել որպես մեկ ընդհանուր միավոր կամ աշխատել սերտ համագործակցությամբ

2.2. ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՕԳՏՎՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱԴԱՐԱՆԻՑ

- Դպրոցների մեծ մասն ամուր կապեր ունեն համայնքային գրադարանների հետ և նույնիսկ շատ ու շատ համայնքային գրադարաններ գտնվում են միևնույն շենքում: Համայնքային գրադարանները չպետք է սահմանափակվեն միայն հետաքրքրվող ընթերցողներին գրքեր տրամադրելով, որովհետև գրադարանների հիմնական նպատակներից մեկն էլ պետք է լինի բնակիչների մասնակցությունը համայնքային տարբեր նախաձեռնություններում խրախուսելը, համայնքային հանդիպումների և քննարկումների համար վայր տրամադրելը, իսկ այդ ամենը կնպաստի համայնքային մոբիլիզացիային և զարգացմանը: Այս ամենը հաշվի առնելով՝ անհրաժեշտ է նշել, որ գրադարանները կարող են և պետք է ունենան մեծ դեր համայնքային զարգացման համատեքստում:

Շատ կարևոր է համայնքային գրադարանների զարգացումն ու հզորացումը, դրանց նյութական և տեխնիկական զինումը: Համայնքային գրադարանները ռեսուրս- կենտրոններ են, որոնք պետք է սպասարկեն տարածաշրջանի դպրոցներին և միջին մասնագիտական ու բարձրագույն հաստատություններին, ինչպես նաև առհասարակ համայնքի բնակչությանը:
Այսօր շատերի համար անմատչելի է դարձել գրախանութներում վաճառվող գրականության ձեռքբերումը Ուստի թե՛ երեխաների, թե՛ երիտասարդության համար ինքնակրթությամբ անվճար զբաղվելու միակ հույսը գրադարաններն են՝ իրենց համեստ հնարավորություններով:
Շատ գրադարանավարներ նշում են, որ ակտիվ ընթերցողներ են նաև կենսաթոշակառուները, հատկապես հիվանդ և անկողնային տարեցները: Հեռուստատեսային եւ հատկապես սերիալային գրոհին դատապարտված մեր ազգաբնակչության, մասնավորապես երեխաների և երիտասարդության համար որքան կարևոր է ներկայումս ընթերցանության նկատմամբ հարգանք և սեր դաստիարակելը, այդ սերն ու հարգանքը պահպանելը:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

- Հավելված 1. Դալարի համայնքային գրադարան, ֆոտոպատում
- Հավելված 2. Դալարի միջնակարգ դպրոցի գրադարան, ֆոտոպատում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատանքս՝ հուսանք, որ համառ և նպատակասլաց ջանքերի ու աշխատանքի արդյունքում մեր դպրոցն էլ, ինչպես նաև ցանկացած գյուղական փոքր համայնիքի դպրոց, կունենա նորագույն տեխնոլոգիաներով և ռեսուրսներով հարուստ գրադարան, որը՝ որպես ռեսուրս-կենտրոն, կսպասարկի նաև համայնքի բնակիչներին և հասանելի կլինի ուսանողների, աշակերտների, ուսուցիչների և առհասարակ ողջ հանրության համար:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ